ՀՀ Վճռաբեկ դատարանի
Քաղաքացիական եւ վարչական պալատին

Բողոք բերող անձ՝
“Ինֆորմացիայի ազատության կենտրոն”
հասարակական կազմակերպություն
(նախագահ՝ Շուշան Դոյդոյան)
ՀՎՀՀ՝ 02568394
ՊԳՎ՝ թիվ 211 171 01863
Հասցե՝ Երեւան 0010, Փ. Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 010 56 03 60, e-mail: foi@foi.am

Ներկայացուցիչ՝ Արտակ Զեյնալյանից
Բնակվող՝ 18 բն, 16 շ, Հր. Քոչարի փ,ք. Երևան, 0012, Հայաստան
Ծանուցման հասցե՝ 12 բն, 116 շ, Նալբանդյան փ, ք. Երևան, 0001, Հայաստան

Գործի մասնակից՝
ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն
Հասցե՝ 104 շ, Նալբանդյան փ, ք. Երևան, 0010 Հայաստան,

Բողոքարկվող դատական ակտ՝
ՀՀ Վարչական վերաքննիչ դատարանի՝ թիվ ՎԴ/7503/05/13 գործով
18.12.2014թ.-ի որոշում՝ վերքաննիչ բողոքը մերժելու մասին

Վճռաբեկ բողոքը ներկայացվել է առձեռն

Վճռաբեկ բողոք

վերքաննիչ բողոքը մասնակի բավարարելու, գործի վարույթը կարճելու մասին
վերաքննիչ դատարանի որոշման դեմ

ՀՀ Վճռաբեկ դատարանին ենք դիմում՝ իրացնելով իմ Վստահորդի՝ ՀՀ Սահմանադրության 18, 19-րդ հոդվածներով, “Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին” Կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6, 13-րդ հոդվածներով երաշխավորված եւ ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքով ձեւակերպված դատական պաշտպանության իրավունքը:

1. **Գործի դատավարական նախապատմությունը**

1.1. «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը (այսուհետ նաև՝ ԻԱԿ, նաև՝ Վստահորդ), 07.05.2013թ տեղեկություն ստանալու № 201-ի 2 գրավոր հարցմամբ դիմել է ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնին (այսուհետ նաև՝ Պատասխանող, նաև՝ Կոմիտե)՝պահանջելով տեղեկատվություն Երևան քաղաքի փակ շուկայի վերաբերյալ:

1.2. Կոմիտեն 18.05.2013թ № ԿԽ-1/1813 գրությամբ մերժել է ԻԱԿ-ին տրամադրել հայցվող տեղեկատվությունը:

1.3. Վստահորդիս անունից 23.08.2013թ հայցադիմում ենք ներկայացրել ՀՀ վարչական դատարանին՝ ընդդեմ ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի՝ պահանջելով պարտավորեցնել Պատասխանողին անվճար կամ տեղեկատվությունը՝ 10 էջը գերազանցելու դեպքում, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված սկզբունքների կիրառմամբ վճարովի տրամադրել 2013 թվականի մայիսի 07-ի № 201-ի 2 հարցմամբ փնտրվող տեղեկատվությունը:

1.4. ՀՀ վարչական դատարանը 06.06.2014թ վճռով (հետայսու՝ 06.06.2014թ Վճիռ) մերժել է ԻԱԿ-ի հայցը:

1.5. 30.06.2014թ.-ին 06.06.2014թ. Վճռի դեմ վերաքննիչ բողոք ենք ներկայացրել (հետայսու՝ Վերաքննիչ բողոք):

1.6. 04.08.2014թ. որոշմամբ ՀՀ Վարչական վերաքննիչ դատարանը Վերաքննիչ բողոքն ընդունել է վարույթ:

1.7. 18.12.2014թ. ՀՀ Վարչական վերաքննիչ դատարանը որոշում է կայացրել Վերաքննիչ բողոքը մերժելու՝ թիվ ՎԴ/7503/05/13 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 06.06.2014թ. վճիռը անփոփոխ թողնելու մասին (հետայսու՝ Որոշում):

2. Բողոքի հիմքերը եւ փաստարկները

2.1. Վեճի առարկա տեղեկությունների մի մասի տրամադրման սահմանափակման վերաբերյալ

2.1.1. 06.06.2014թ Վճռի բողոքարկման հիմքում ի թիվս այլոց ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի եւ 114-րդ հոդվածի 5-րդ մասի իմպերատիվ իրավակարգավորումները: Մասնավորապես, ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ “Դատարանը, … որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ **բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա** …” (ընդգծումը մերն է): Նույն օրեսգրքի 114-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ “Գործն ըստ էության լուծող դատական ակտը պետք է լինի օրինական և **հիմնավորված**” (ընդգծումը մերն է): Վերոնշյալ հոդվածները կաշկանդում են դատարանին անտեսել հայցվորի կամ բողոքաբերի փաստարկները եւ դիրքորոշումները, թույլ չեն տալիս կամայականորեն ընտրել մի փաստարկ եւ հերքել այն՝ փոխարենը չանդրադառնալ մեկ այլ փաստարկի, որն անհերքելի է: Եթե չկիրառվեն չկիրառվեն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի եւ 114-րդ հոդվածի 5-րդ մասի վերոնշյալ դրույթները,

ապա չի կայանա արդարության պահանջների պահպանմամբ դատաքննության եւ դատական արդյունավետ պաշտպանության սահմանադրական սկզբունքները: Ինչպես ՀՀ վարչական, այնպես էլ ՀՀ Վերաքննիչ վարչական դատարանը չի պահպանել սույն բողոքի 2.1 կետում վկայակոչված կանոնները, ուստի կայացրել է չհիմնավորված դատական ակտ:

2.1.2. Վերաքննիչ դատարանը նշել է. "Վերաքննիչ դատարանի կարծիքով «բնագավառում տիրող իրավական վիճակով» եզրույթը կարող է վերաբերել, մասնավորապես, տվյալ բնագավառի արժեքների պահպանության, զարգացման խնդիրներին, դրանց առկա վիճակին ընդհանրապես, սակայն որևէ կերպ դա չի կարող վերաբերել կոնկրետ օբյեկտի /թեկուզ պատմական հուշարձան ճանաչված/ իրավատերերին կամ նրանց իրավունքների ծագման հիմքերին, քանի որ այդ տեղեկությունները որևէ կապ չունեն մշակույթի բնագավառում տվյալ իրական վիճակի խնդրի հետ": Վերաքննիչ դատարանն իրավաչափ է համարել ՀՀ վարչական դատարանի եզրահանգումն առ այն, որ պահանջվող տեղեկատվությունն օբյեկտիվ իրականության մեջ չի կարող որևէ կերպ արտացոլել ՀՀ մշակույթի բնագավառում տիրող իրական վիճակը, հետևապես այն չի կարող որակվել որպես այդպիսի իրավիճակի գնահատման գործոն: Վարչական դատարանի եզրահանգումը մեզ հայտնի էր Վարչական դատարանի Վճռից, եւ այդ եզրահանգման դեմ Վերաքննիչ բողոքում ներկայացրել էինք հակափաստարկ (Վերաքննիչ բողոքի 2.11 կետ): Գտնում ենք, որ հիմնավորված դատական ակտ կայացնելու համար Վերաքննիչ դատարանը պետք է անդրադառնար Վերաքննիչ բողոքի 2.11-րդ կետում ներկայացրած մեր փաստարկներին, եւ դրանց չհաստատվելու դեպքում միայն վերահաստատեր Վարչական դատարանի եզրահանգումը: Այնինչ, ՀՀ Վերաքննիչ վարչական դատարանը դա չի արել, իսկ անելու դեպքում կկայացներ այլ որոշում: Ուստի, ՀՀ Վերաքննիչ վարչական դատարանը թույլ է տվել դատավարական սխալ:

2.2. Վեճի առարկա տեղեկությունների մի մասի տրամադրման վճարովիության հարցի քննության վերաբերյալ

2.2.1. Վստահորդս Կոմիտեի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնից պահանջել է Երևան քաղաքի փակ շուկայի վերաբերյալ տեղեկատվություն, իսկ Կոմիտեն հայտնել է, որ տեղեկատվությունը կտրամադրի վճարելու դեպքում: Ընդ որում, Պատասխանողը տեղեկատվության տրամադրման մերժումը պատասխանող պայմանավորել է. 1. պահանջվող տեղեկատվության համար «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով համապատասխան չափով վճար վճարելու անհրաժեշտությամբ, 2. պահանջվող տեղեկությունների ծավալում ընդգրկված որոշակի տեղեկությունների տրամադրումը «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի ուժով սահմանափակված լինելու հանգամանքով: Այդ մասին դատարանը նշել է վճռում: Կոմիտեի պատասխանից հստակ է, որ Կոմիտեն մերժել է տրամադրել տեղեկությունների մի մասը, այնինչ մեկ այլ մասը պատրաստակամ է տրամադրել «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով համապատասխան չափով վճար վճարելու դեպքում: Հակառակ դեպքում (եթե տեղեկությունների ամբողջ ծավալը ըստ

Կոմիտեի ենթակա լիներ մերժման) անիմաստ կլիներ Կոմիտեի կողմից վճար վճարելու պահանջը:

2.2.2. Կոմիտեից իմ Վստահորդի կողմից պահանջվող տեղեկությունների մի մասը տրամադրելու պարտականությունը «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով համապատասխան չափով վճար վճարելու դեպքում վեճի առարկա չէ, իսկ Կոմիտեն իր պատասխան գրությամբ (վարչական ակտով) պատրաստակամություն է հայտնել «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով համապատասխան չափով վճար վճարելու դեպքում տրամադրել պահանջվող տեղեկությունները «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով սահմանված սահմանափումները հաշվի առնելով: Կադաստրի գրությունից բխում է, որ պահանջվող տեղեկությունների ծավալում կան տեղեկություններ, որոնք ենթակա չեն տրամադրմա, եւ կան տեղեկություններ, որոնք ենթակա են տրամադրման՝ սահմանված չափի վճար վճարելու դեպքում: Վերաքննիչ բողոքի առարկան եւ տեղեկությունների տրամադրման սահմանափակում է, եւ տեղեկությունները տրամադրելու դեպքում վճար վճարելու պահանջի իրավաչափությունը: Ընդ որում, եթե հիմնավորվի, որ Կադաստրի իրավաչափորեն է մերժել տեղեկությունների մի մասի տրամադրումը, ապա միեւնույն է, տեղեկության մյուս մասը տրամադրելու վճարովիության հարցը ամեն դեպքում պետք է քննվեր դատարանի կողմից:

2.2.3. Վերաքննիչ վարչական դատարանը նշել է. “Ինչ վերաբերում է պահանջվող տեղեկությունների համար համապատասխան վճարում կատարելու խնդրին, ապա, Վերաքննիչ դատարանի կարծիքով, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների հիմքով տեղեկատվության տրամադրումը մերժելու պարագայում՝ վճարման խնդրի քննարկումը դառնում է անառարկա և իմաստազուրկ”: Վերաքննիչ դատարանը պետք է անդրադառնար տեղեկությունների այն մասի վճարովիությանը, որոնք Կադաստրի իմ Վստահորդի հարցմանն ի պատասխան տրամադրված գրության համաձայն՝ պատրաստ էր տրամադրել «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով համապատասխան չափով վճար վճարելու դեպքում: Այնինչ, ՀՀ Վերաքննիչ վարչական դատարանը դա չի արել, իսկ անելու դեպքում կկայացներ այլ որոշում: Ուստի, ՀՀ Վերաքննիչ վարչական դատարանը թույլ է տվել դատավարական սխալ:

2.3. Թիվ ՎԴ/3584/05/13 գործով Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2013 թվականի մայիսի 22-ի «Հայցադիմումը վերադարձնելու մասին» որոշման դեմ Գևորգ Հայրապետյանի վերաքննիչ բողոքը բավարարելու մասին ՀՀ Վերաքննիչ վարչական դատարանի 13.07.2014թ. որոշման մեջ (դատական ակտը կցվում է) ՀՀ Վերաքննիչ վարչական դատարանը հայտնել է հետեւյալ դիրքորոշումը. “Կատարված վերլուծության հիման վրա Վերաքննիչ դատարանը եզրակացնում է, որ բողոքով առաջադրված պահանջը ենթակա է բավարարման, որպիսի եզրահանգումը ՎԴ օրենսգրքի 11713-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված Վերաքննիչ դատարանի լիազորությունների շրջանակում է”: Այդուհետ դատարանը նշել է. “Հարկ է նաև նշել, որ բողոքով ներկայացված

մնացած հիմք-հիմնավորումների կապակցությամբ ստացվելիք հնարավոր բոլոր եզրահանգումներն այլևս չեն կարող ազդել արդեն իսկ ստացված վերոհիշյալ եզրահանգման վրա, **<u>ուստի Վերաքննիչ դատարանը վերացած է գնահատում դրանց անդրադառնալու դատավարական անհրաժեշտությունը</u>**” (ընդգծումը մերն է)։ Դատարանը կայացրել է արդար որոշում, որի հետ համաձայն են եղել դատավարության կողմերը, իսկ դատարանի որոշման մեջ նշված դիրքորոշումները, ներառյալ՝ սույն բողոքի սույն կետում մեր կողմից վկայակոչված եւ ընդգծվածը, նույնպես արդար են։ Դատարանի դիրքորոշումից բխում է, որ եթե **<u>կատարված վերլուծության հիման վրա Վերաքննիչ դատարանը եզրակացներ, որ բողոքով առաջադրված պահանջը ենթակա չէ բավարարման,</u>** ապադատարանը պետք է անդրադառնար բողոքով ներկայացված մնացած հիմք-հիմնավորումներին եւ դրանք բոլորը հերքելու դեպքու մերժեր հայցվորի պահանջը, իսկ կամայական մեկը հաստատելու դեպքում՝ բավարարեր։

2.4. Վկայակոչված գործով հայցվորը եւ սույն գործով հայցվորը իրավահավասար են. **res judicata** սկզբունքը պահանջում է, որ օրենքը լինի կանխատեսելի եւ կիրառվի միատեսակ, ուստի, ՀՀ Վերաքննիչ վարչական դատարանը պետք է անդրադառնար սույն բողոքի 2.1. եւ 2.2. կետերեւմ եւ համապատասխան ենթակետերում նկարագրված հարցերին, սակայն դա չի արել։ Հետեւաբար, սույն բողոքի 2.1.2. եւ 2.2.3. կետերում նշված հիմնավորումներով ՀՀ Վերաքննիչ վարչական դատարանի թույլ տված դատավարական սխալի արդյունքում խախտվել են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասի եւ 114-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները։

2.5. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով համապատասխան չափով վճար վճարելու անհրաժեշտության վերաբերյալ

2.5.1. ՀՀ Վերաքննիչ վարչական դատարանը իմ Վստահորդի կողմից փնտրվող տեղեկությունների վճարովիության հարցին չի անդրադարձել։ Սակայն, վճարովիության հարցը ներկայացվել է Վերաքննիչ բողոքով։

2.5.2. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքով սահմանված կարգով գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների՝ դրանց ծագման, դադարման, փոխանցման կամ փոփոխման պետական գրանցման, ինչպես նաև անշարժ գույքի միասնական կադաստրի տեղեկատվության տրամադրման համար մատուցվող ծառայությունների համար պետական բյուջե գանձվում է վճար սույն օրենքով սահմանված չափերով՝ գանձապետարանում բացված համապատասխան հաշվին։ Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դիմողները պարտավոր են վճարել սույն օրենքով սահմանված վճարները։

2.5.3. Սույն գործով վեճի առարկա տեղեկությունների վճարովիության հարցը քննարկման է ենթակա «Տեղեկատվության ազատության մասին» եւ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքների շրջանակում, ինչպես նաեւ տեղեկություն տնօրինող մարմինների («Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված) մոտ գտնվող տեղեկության, մասնավորապես պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական ցանկացած տիպի եւ անվանում ունեցող (գործակալություն, տեսչություն, ծառայություն) հիմնարկների մոտ

առկա տեղեկատվությունը վճարովի հիմունքներով տրամադրելու արդարացիության համատեքստում:

2.5.4. Սույն գործով Վարչական եւ Վերաքննիչ դատարանները չեն համեմատել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով տեղեկության անվճարովիության կանոնակարգումները «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի կանոնակարգումների հետ: Այնինչ, այդ մասին հայցով եւ Վերաքննիչ բողոքով խնդրել էինք: Գտնում ենք, որ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված է որոշ դեպքերում տեղեկության տրամադրման անվճարովիության սկզբունք, ուստի դատարանները պետք է անդրադառնային նաև որոշ դեպքերում տեղեկության տրամադրման անվճարովիության համեմատությանը, պարզեին, արդյոք ներկայացված հայցով վիճարկվող դեպքը ենթադրում է տեղեկության վճարովի տրամադրում, թե անվճար:: Դատարանները չեն անդրադարձել այն հարցին, թե ինչո՞ւ Վստահորդիս ներկայացրած հայցադիմումով վիճարկվող դեպքում կիրառելի չեն տեղեկության տրամադրման անվճարովիության դեպքերը, որոնք սահմանված են «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով:

2.5.5. Մեր դիրքորոշմամբ սույն գործով վեճի առարկա տեղեկությունները պետք է տրամադրվեն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ տեղեկության տրամադրման վճարովիության կամ անվճար տրամադրման կանոններով: Մեր դիրքորոշումը հիմնված է հետեւյալ ձաստարկների վրա:

2.5.6. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդված համաձայն՝ «Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի տեսակները և ստորադասությունը, դրանց մշակման, փորձաքննության, ընդունման, հրապարակման, ուժի մեջ մտնելու, գործողության, փոփոխման, գործողության դադարեցման, մեկնաբանման, պարզաբանման ու համակարգման ընդհանուր կարգը»: Գտնում ենք, որ տեղեկության տրամադրման վճարովիության հարցում «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի և/կամ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի կիրառման հարցը լուծելիս պետք է առաջնորդվել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի կանոնակարգումներով՝ որպես նույն օրենքի ուժով նույն օրենքի կարգավորման ենթակա հարց:

2.5.7. Այսպես, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ հավասար իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերի կամ նույն իրավական ակտի տարբեր մասերի միջև հակասության դեպքում պետական և տեղական ինքնակառավարման մարմինները ֆիզիկական ու իրավաբանական անձանց հետ հարաբերություններում պետք է կիրառեն ֆիզիկական և իրավաբանական անձանց համար նախընտրելի նորմատիվ իրավական ակտը կամ դրա մասը: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի նշված հոդվածը վկայակոչել էինք Վարչական դատարանին ներկայացված հայցադիմումում, նշել էին, որ մեր դիրքորոշմամբ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 7-րդ մասի կարգավորմամբ Վստահորդիս համար նախընտրելի է տեղեկատվության վճարովիության վերաբերյալ «Տեղատվության ազատության մասին» ՀՀ օրենքի կարգավորումը և պետք է այն կիրառվի:

2.5.8. Հաշվի անելով, որ տեղեկության տրամադրման վճարովիության հարցում Տեղատվության ազատության մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումներն օբյեկտիվ իրականությունում տեղեկություն ձնտրող յուրաքանչյուրի համար ավելի նախընտրելի են, քան «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի կարգավորումները՝ գտնում ենք, որ Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերը չպետք է գոյություն ունենան: Դրանք չպետք է կիրառվեն, քանի որ իրավունքը զարգացել է՝ տեղեկատվություն ստանալու գործընթացի համար «Տեղատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանելով ավելի հեշտ, ավելի նախընտրելի կանոններ, քան սահմանված են «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով: ՀՀ քաղաքացու անունից եւ հանուն նրա գործող օրենսդիրը, հաշվի առնելով իրավական ակտերի միջեւ հնարավոր հակասությունը, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 7-րդ մասի կարգավորմամբ սահմանել է, որ չպետք է գործեն իրվական ակտերի այն դրույթները, որոնք ունեն ավելի նախընտրելի այլընտրանք:

3. Բողոքը վարույթ ընդունելու մասին հիմնավորումներ

3.1. Գտնում ենք, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տրվել դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա: Դատական սխալի առկայությունը հիմնավորել ենք սույն բողոքի 2.1-2.4 կետերում եւ եւ համապատասխան ենթակետերում: Ուստի գտնում ենք, որ առկա է սույն բողոքը վարույթ ընդունելու՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում առկա հիմքը, այն է՝ առերևույթ թույլ է տրվել դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա:

3.2. Գտնում ենք, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար սույն բողոքի 2.5 եւ համապատասխան ենթակետերում նշված հիմնավորմամբ: Մասնավորապես, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ “Սույն հոդվածի իմաստով՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, մասնավորապես, եթե՝ … 5) վճռաբեկ դատարանը համարում է, որ բողոքարկվող դատական ակտի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր”: Սույն բողոքի 2.5 կետում եւ համապատասխան ենթակետերում ներկայացրել ենք «Տեղատվության ազատության մասին» եւ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքներով կարգավորվու են տեղեկատվության տրամադրման վճարովիության հարցեր, ինչպես նաեւ նշել ենք, որ Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 7-րդ մասի կարգավորմամբ սույն գործով վեճի առարկա տեղեկությունների տրամադրման վճարովիության հարցում նախընտրել ենք Տեղատվության ազատության մասին» ՀՀ օրենքի կրգավորումները եւ գտնում ենք, որ այդ կարգավորումները պետք է կիրառվեն: Այս հարցը վեճի առարկա է, սակայն դատարանները այս հարցի պատասխանը չեն տրամադրել, Վերաքննիչ դատարանը

հարցը քննարկման առարկա չի դարձրել, թեեւ այդ մասին նշվել էր Վերաքննիչ բողոքում: Ուստի, ՀՀ Վճռաբեկ դատարանից ակնկալում ենք դիրքորոշում, թե նման պարագայում ինչպես պետք է կիրառվի օրենքը: Ուստի, սույն բողոքի 2.5 կետի եւ համապատասխան ենթակետերի հիման վրա սույն կետի հիմնավորումները հաշվի առնելով՝ գտնում ենք, որ առկա է սույն բողոքը վարույթ ընդունելու՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում առկա հիմքը, այն է՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար:

4. Բողոքի պահանջը

Ելնելով վերագրյալից եւ առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 18, 19-րդ հոդվածներով, “Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին” Կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6, 13-րդ հոդվածներով, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 23 գլխի պահանջներով՝

Խնդրում եմ

Բեկանել ՀՀ Վարչական վերաքննիչ դատարանի՝ թիվ ՎԴ/7503/05/13 գործով 18.12.2014թ.-ի որոշումը և գործն ուղարկել նույն դատարան, նոր քննության:

5. Բողոքին կցվող փաստաթղթերը

5.1. Լիազորագիրը,
5.2. Փաստաբանական գործունեության արտոնագրի պատճենը
5.3. Միջնորդություն՝ պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին,
5.4. Սույն բողոքը ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնին ուղարկելը հավաստող փաստաթղթ (փոստային անդորրագիր),
5.5. Սույն բողոքը ՀՀ Վարչական վերաքննիչ դատարանին ուղարկելը հավաստող փաստաթղթ (փոստային անդորրագիր),
5.6. Թիվ ՎԴ/3584/05/13 դատական գործով՝ սույն բողոքում վկայակոչված դատական ակտը www.datalex.am կայքից (1 դատական ակտ, 5 թերթ),
5.7. Սույն բողոքի էլեկտրոնային տարբերակը:

“Ինֆորմացիայի ազատության
կենտրոն” ՀԿ-ի ներկայացուցիչ Արտակ Զեյնալյան

18.01.2015., ք. Երեւան

ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ

№ ՎԴ/7503/05/13 գործով բողոք բերող «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի պետական տուրքի վճարման արտոնություն սահմանելու մասին

Հարգելի դատարան,

Վստահորդս ոչ առևտրային՝ շահույթ չհետապնդող կազմակերպություն է, նրա նպատակներն ու խնդիրներն են, ի թիվս այլոց՝ Հայաստանում տեղեկատվության ազատության զարգացմանը նպաստելը, մարդկանց տեղեկություն ստանալու իրավունքի պաշտպանությանը, տեղեկատվության ազատության ոլորտում իրավագիտակցության բարձրացմանը, կրթվելուն նպաստելը: Իր խնդիրներն իրականացնելու նպատակով դատական պաշտպանության իրավունքն իրացնելու համար Վստահորդիս կողմից պետական տուրքի վճարումը կստվերի այն իրավունքի կարևորություն ու արժեքը, որի պաշտպանություն իրականացնում է նա: Ուստի՝ առաջնորդվելով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 21-րդ և 22-րդ հոդվածների դրույթներով

միջնորդում եմ

№ ՎԴ/7503/05/13 գործով բողոք բերող «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի համար սահմանել պետական տուրքի արտոնություն.

ազատել պետական տուրքի վճարումից

կամ

հետաձգել պետական տուրքի վճարման ժամկետը՝ մինչև սույն գործով դատական ակտի կայացումը:

“Ինֆորմացիայի ազատության
կենտրոն” ՀԿ-ի ներկայացուցիչ Արտակ Զեյնալյան

18.01.2015., ք. Երևան